Սեպտեմբերի 12-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 20 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Երևանի խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների թիվ 8 հատուկ կրթահամալիր» ՊՈԱԿ-ում խոհարարական դասերի կազմակերպման դասասենյակի վերանորոգման և «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք գյուղի 360 աշակերտի համար նոր միջնակարգ դպրոցի տարածքի ասֆալտապատման ծրագրերը.

«Ա. Ի. Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (ԵրՖԻ)» հիմնադրամի կողմից իրականացվող «Աջակցություն տիեզերական ճառագայթների բաժանմունքի գործունեությանը» ծրագիրը.

«Դիլիջան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի այցելուների կենտրոնի մասնաշենքի վերանորոգման ծրագիրը.

«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հրազդանի անտառատնտեսության «Արզական և Մեղրաձոր» պետական արգելավայրի պահպանության ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Լեռնագյուղ համայնքի խմելու ջրի ջրագծի կառուցման, ջրավազանների ցանկապատման, և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Կաթնաղբյուր գյուղի ճանապարհների ջրահեռացման համակարգի կառուցման աշխատանքների ծրագրերը.

«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող Տանիքի կառուցման» ծրագիրը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Նորատուս համայնքի թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգման ու Հայրավանք համայնքի մշակույթի տան շենքում մանկապարտեզի հիմնման, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Կապան քաղաքի թիվ 5 և 13 դպրոցների ու թիվ 2 մանկապարտեզի մասնակի վերանորոգման, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիան համայնքի բժշկական կենտրոնի մասնակի վերանորոգման, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ախթալա, Ջիլիզա և Կաճաճկոտ համայնքներին շինարարական նյութերի մատակարարման և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի Սոթք համայնքի մանկապարտեզի վերանորոգման ծրագրերը.

«Ընդեմ իրավական կամայականության» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող ծրագիրը.

Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող՝ Որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպման ծրագիրը.

Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից իրականացվող «ՄԻԱՎ-ի կանխարգելումը Հայաստանում» ծրագիրը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստան» մարզական հասարակական կազմակերպության սեղանի թենիսի մարզասրահի տանիքի վերանորգման ծրագիրը.

«Կամրջակ» սոցիալ-բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդավան համայնքի մշակութային տան դռների և պատուհանների փոփոխման ծրագիրը.

«Երևանի ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Էջմիածին քաղաքի թիվ 16 մանկապարտեզի խոհանոցի և հարակից միջանցքի վերանորոգման ծրագիրը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ ու բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: